

Միհրանը տաճկահայ դաշնակցական խրմբապետ մըն էր, որ կը նկատէր, թէ Հ. Յ. Դաշնակցութիւնը թրքահայոց ազատագրութեան միայն նուիրուած մարտական կազմակերպութիւն մըն է: Միհրան կատարել հակառակորդ էր սոցիալիզմի եւ Հ. Յ. Դաշնակցութեան յեղափոխական գործունէութեան Ռուսիոյ մէջ, ցարիզմի դէմ: Ճիշդ է, Միհրան ինքը մասնակցած էր հայ-թաթարական կռիւներուն Կովկասի մէջ, եւ հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան նպատած էր իր ընկերներուն հետ միասին, որոնք բոլորն ալ մարտընչած էին Հ. Յ. Դաշնակցութեան դրօշին տակ: Սակայն Միհրան իր կռիւը կը նկատէր ուղղուած միայն թաթարներուն դէմ, թէեւ յայտնի էր, որ զանոնք գրգռողն ու զինողը ցարական կառավարութիւնն էր: Միհրան գործ չէր ուզեր ունենալ ռուսական բռնակալութեան հետ եւ կ'ուզէր, որ կուսակցութեան բոլոր ուժերը ուղղուին դէպի Տաճկահայաստան ընդդէմ սուլթանական ռեժիմի:

Միհրանի ետեւ շուտով կանգնեցաւ հայկական գաղութային կեդրոններու (Թիֆլիսի, Բագուի) հակադաշնակցական պուրթուազիան, որ թէ՛ դրամով, թէ՛ դրշով, թէ՛ խօսքով, թէ՛ ամէն հնարաւոր միջոցներով ուժ տուաւ միհրանական շարժման, յոյս ունենալով այդ կերպ կասեցնել Հ. Յ. Դաշնակցութեան սոցիալիստական եւ յեղափոխական ձգտումները Ռուսիոյ մէջ:

Հակադաշնակցական մութ տարրերու գրգռումով Միհրանականները ուզեցին իրենց նպատակին հասնիլ, Հ. Յ. Դաշնակցութեան ղեկավար անձնաւորութիւնները ահաբեկման ենթարկելով: Կովկասի մէջ իրենց ծրագիրը վիժեցաւ: Սակայն Թուրքիոյ մէջ անոնց դաւադրական յարձակման գոհ գնաց Եղիշէ Թովփէանը, որ թերեւս ամենէն խոշոր եւ վճռական դերն էր կատարած՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը սոցիալիստական գործունէութեան մղելու եւ Վիեննայի ժողովին ընդունած միջոցները ընտրելու մէջ: Եղիշէ Թովփէան գրչով ու խօսքով ամենէն կատարի ու ամենէն եռանդուն պայքարը մղած էր թէ՛ միհրանական շարժման եւ թէ՛ անջատողական հոսանքին դէմ՝ փրկելու համար կուսակցութիւնը պառակտումէ ու քայքայումէ:

IV

ԶԳՐՈՒԱԾ ԾՐԱԳԻՐԸ

Անջատողական եւ Միհրանական հոսանքները վիժեցան եւ գրեթէ անհետ կորան. մինչդեռ Հ. Յ. Դաշնակցութիւնը մնաց կանգուն եւ աւելի խոր արմատներ ձգեց աշխարհի չորս կողմը ցրուած հայութեան սրտին մէջ:

Արդեօ՞ք Հ. Յ. Դաշնակցութեան կենսունակութեան եւ յարածուն յաջողութեան գաղտնիքը ընկերային այն վարդապետութիւնն էր, զոր մեր կուսակցութիւնը նուիրագործեց իր Վիեննայի ընդհանուր ժողովին մէջ: Արդեօ՞ք անջատական եւ միհրանական հոսանքներուն բոլոր գաղափարները իրապէս եւ ամբողջութեամբ անպէտք լինելուն պատճառով էր որ անոնք որ եւ է յաջողութիւն չունեցան:

Եթէ այժմ յետադարձ հայեացք մը նետենք մէկ կողմէն՝ անջատական եւ միհրանական շարժումներու առաջադրած գաղափարներուն, եւ միւս կողմէն՝ Հ. Յ. Դաշնակցութեան Վիեննայի ընդհանուր ժողովին մէջ պաշտօնապէս որդեգրուած սկզբունքներուն վրայ, չպիտի կարողանանք չնկատել, որ անտարակոյս որոշ առողջ տարրեր կային առաջիններու մէջ եւ որ կային ու կան նաեւ շատ վիճելի կէտեր վերջիններու մէջ:

Եւ սակայն անջատական եւ միհրանական հոսանքներուն որոշ առողջ միտքերը չփրկեցին զանոնք, ինչպէս նաեւ Հ. Յ. Դաշնակցութեան ծրագրին մէջ մտած շարք մը վիճելի կէտերու եւ սկզբունքներու զոյութիւնը չխանգարեց, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը շարունակէր իր յաղթական ընթացքը եւ պահպանէր իր տիրական դիրքը հայ քաղաքական կեանքի մէջ:

Պատճառը, իմ կարծիքով, այն է, որ՝ կուսակցութեանց յաջողութեան համար՝ գրուած ծրագիրները, պաշտօնական աշխարհահայեցողութիւնները, տեսական, տեսարանական տուեալները անհամեմատ աւելի փոքրիկ, երկրորդական դեր կը կատարեն, քան սովորաբար կը կարծուի: Հ. Յ. Դաշնակցութիւնը կանգուն է, առողջ է, մեծ է եւ յաղթական է ոչ թէ իր գրուած ծրագիրներով ու սկզբունքներով, այլ այն անչօչափելի, բայց մեծ ու